ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ ______________ / Հ. Վ. ______________

«31» 08 2023 թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Սիսիանի համար 1 հիմնական դպրոց, առաջին դասարան

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Հայրապետյան Տաթևիկ Երվանդի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

«2023-2024» ուստարի

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

## 1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

2023-2024 ուսումնական տարին առաջին դասարանցիները սկսեցին 23 աշակերտով: Հիմնականում բոլորն էլ պարտաճանաչ, պատրաստակամ, խելացի աշակերտներ են:

23 աշակերտներից 15-ը տղա են, 8-ը աղջիկ:

Իմ նպատակն է՝ ձևավորել ամուր ու կարգապահ կոլեկտիվ, աշխատել դասարանի առաջադիմությանը բարձր պահելու ուղղությամբ: Աշակերտները համախմբված են, աշխատասեր, պարտաճանաչ և ընկերասեր, ունեն ուսման նկատմամբ պատասխանատվության զգացում:

2. Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

1.Կահավորել և ձևավորել դասասենյակը:

3. Հետևել դասասենյակի և շրջապատի մաքրությանը:

4. Ուշադրություն դարձնել աշակերտների արտահագուստին:

5. Դասարանում սահմանել հերթապահություն:

6. Աշխատանք տանել աշակերտների ուսման առաջադիմության բարձրացման ուղղությամբ,հաստատել գիտակցական կարգապահություն:

7. Սեր և հետաքրքրություն առաջացնել ուսման նկատմամբ:

8. Ապահովել դասղեկ-ուսուցիչ-աշակերտ-ծնող կապը:

9. Սեր արթնացնել ընթերցանության նկատմամբ, կապ պահպանել գրադարանի հետ:

10. Ուշադրություն դարձնել աշխատանքային դաստիարակությանը:

11. Ամեն կերպ օգնել և աջակցել ետ մնացող աշակերտներին:

12. Ստեղծել փոխադարձ հարգանք միմյանց նկատմամբ:

13. Ստեղծել և ձևավորել համերաշխ աշակերտական կոլեկտիվ:

14. Հայեցի դաստիարակություն

- Հոգևոր դաստիարակություն

Դասարանում ստեղծել լավ մթնոլորտ: Սովորեցնել հարգել միմյանց, լինել ազնիվ,ճշտախոս,պատասխանատու,միշտ պատրաստ Օգնելու ընկերոջը: Խոսել քրիստոնեության մասին,սերմանել հայրենասիրություն:

- Գեղագիտական դաստիարակություն

Հաճախակի կազմակերպել էքսկուրսիաներ և այցելություն թանգարաններ,կազմակերպել տարիքային կինոդիտումներ և ներկայացումների դիտումներ,դրանք քննարկել և վերլուծել:

- Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Անցկացնել զրույցներ հայրենասիրական թեմաներով,անցկացնել զրույցներ նվիրված Հայոց բանակի կազմավորման մասին,սերմանել սեր առ հայրենիքի,ծանոթացնել մեր հերոսներին: Ծանոթացնել պետության խորհրդանիշներին: Գիտակցեն, որ իրենք չպետք է անմասն մնան հայրենիքի բարօրության գործից:

- Ֆիզիկական դաստիարակություն

Սերմանել առողջ ապրելակերպ վարելու սկզբունք: Հետևել աշակերտների մասնակցությունը ֆիզկուլտուրայի դասերին, համադպրոցական և միջդասարանային սպորտային միջոցառումներին:

- Աշխատանքային դաստիարակություն

Դասարանում պահպանել մաքրություն, կարողնալ գնահատել իր և ընկերոջ կատարած աշխատանքը, պահպանել և անհրաժեշտության դեպքում վերանորոգել գույքը: Ձևավորել բարեխիղճ վերաբերմունք դեպի աշխատանքը:

- Բնապահպանական դաստիարակություն

Մաքուր պահել շրջակա միջավայրը: Գարնանը մասնակցել շաբաթօրյակներին և ծառատունկին: Անցկացնել զրույց/ Ես սիրում եմ բնությունը/ թեմայով:

- Դպրոց-ընտանիք կապը

Ապահովել դպրոց-ընտանիք կապը՝ օրագրի միջոցով: Շաբաթվա վերջում ստուգել օրագրերը և նմուշներ կատարել: Հանդիպումներ կազմակերպել դասավանդող ուսուցիչների և ծնողների միջև: Հատկապես մեծ ուշադրություն դարձնել չառաջադիմող աշակերտներին և կապ պահպանել նրանց ծնողների հետ:

## ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| | | | |
|---|---|---|---|
| | Ուշադրության կենտրոնում պահել հետ մնացող՝ աշակերտներին | Տարվա ընթացքում | |
| | Պարտադիր ուսուցման գործընթացին իրականացմանը մասնակից դարձնել ծնողներին,ծնողական և դպրոցական խորհուրդներին | Ուստարվա ընթացքում | |
| | Դժվար առաջադիմող աշակերտներին ըստ նրանց ընդունակությունների ու հտաքրքրությունների ընդգրկել դպրոցական խմբակներ | Ուստարվա ընթացքում | |
| | Հայտնաբերել օժտված երեխաներին,տալ կայուն գիտելիքներ,մղել նրանց ստեղծագործական որոնողական աշխատանքի | Տարվա ընթացքում | |
| | Սահմանել բաց դռների օր ամիսը մեկ անգամ,ապահովել ծնող-ուսուցիչ կապ: | Ուստարվա ընթացքում | |
| | Դաս-ծնող կապը կապը ամրապնդել,հաճախակի անցկացնել հանդիպումներ,սեմինարներ,խորհրդատվություն,կլոր սեղան: Թեման՝ բազմաբնույթ-առողջություն,անվտանգություն,առողջ սնունդ,առողջ ապրելակերպ | Տարվա ընթացքում | |
| | Ուս. աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | |

| | 1 կիսամյակ | | Կատարող |
|---|---|---|---|
| I | Զրույց /Եկեք ծանոթանաք/թեմայով զրույց | 01.09.2023 | Ուսուցիչ,աշակերտներ |
| II | /Իմ ընտանիքը/ թեմայով զրույց | 08.09.2023 | Ուսուցիչ |
| III | Մուլտֆիլմի դիտում և քննարկում | 15.09.2023 | Աշակերտներ |
| IV | /Մեր դպրոցը /թեմայով զրույց | 22.09.2023 | Ուսուցիչ |
| V | /Մարդիկ մեր շուրջը / թեմայով զրույց | 29.09.2023 | Ուսուցիչ |
| VI | Մուլտֆիլմի դիտում և քննարկում | 06.10.2023 | Ուսուցիչ,աշակերտներ |
| VII | /Իմ ընկերները/թեմայով զրույց | 13.10.2023 | Աշակերտներ |
| VIII | /Իմ սիրելի խաղալիքը/ թեմայով զրույց | 03.11.2023 | Աշակերտներ |
| IX | Մուլտֆիլմի դիտում և քննարկում | 10.11.2023 | Ուսուցիչ |
| X | Զրույց /Իմ ազատ ժամանակը/ | 17.11.2023 | Աշակերտներ |
| XI | Քննարկում /Իմ պարտականությունները/ | 24.11.2023 | Աշակերտներ |
| XII | Մուլտֆիլմի դիրում և քննարկում | 01.12.2023 | Աշակերտներ |
| XIII | Զրույց /Իմ հայրենիքը/ | 08.12.2023 | Ուսուցիչ,աշակերտներ |
| XIV | /Հայաստանն իմ տունն է/թեմայով զրույց | 15.12.2023 | Ուսուցիչ,աշակերտներ |
| XV | Մուլտֆիլմի դիտում և քննարկում | 22.12.2023 | Աշակերտներ |
| | 2 Կիսամյակ | | |
| I | /Մեր տոները/թեմայով զրույց | 26.01.2024 | Ուսուցիչ |
| II | /Իմ սիրելի հեքիաթը/թեմայով զրույց | 02.02.2024 | Աշակերտներ |
| III | Մուլտֆիլմի դիտում և քննարկում | 09.02.2024 | Ուսուցիչ,աշակերտներ |
| IV | Գտնված երազ մուլտֆիլմի քննարկում | 16.02.2024 | Աշակերտներ |
| V | /Իմ մայրիկը/ թեմայով զրույց, նկարել մայրիկներին | 23.02.2024 | Աշակերտներ |
| VI | /Իմ տունը/թեմայով զրույց,նկարել տուն | 01.03.2024 | Աշակերտներ |
| VII | Մուլտֆիլմի դիտում և քննարկում | 15.03.2024 | Աշակերտներ |
| VIII | /Բարությունը մեր կյանքում/ թեմայով զրույց | 05.04.2024 | Ուսուցիչ |
| IX | /Բարի գործերի պտուղները/թեմայով զրույց | 12.04.2024 | Ուսուցիչ |
| X | /Ուս ուսի,որ տանք սարեր շուռ կտանք/թեմայով զրույց | 19.04.2024 | Ուսուցիչ |

| | | | |
|---|---|---|---|
| XI | /Իմ ընկերը/թեմայով զրույց | 26.04.2024 | Աշակերտներ |
| XII | /Իմ դպրոցը/թեմայով զրույց | 03.05.2024 | Աշակերտներ |
| XIII | /Իմ քաղաքը/թեմայով զրույց | 10.05.2024 | Աշակերտներ |
| XIV | /Օրվա ռեժիմ/թեմայով զրույց | 17.05.2024 | Ուսուցիչ,աշակերտներ |
| XV | /Դասարանական կանոններ/թեմայով զրույց | 24.05.2024 | Ուսուցիչ,աշակերտներ |
| | | | |
| | | | |